

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«23» 01 2020թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը,
ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ
կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտը, ի դեմս տնօրենի Լիլիթ Ղազանյանի (այսուհետ՝ Կազմակերպություն),

(կազմակերպության անվանումը)

(անուն ազգանուն)

որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝
միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001
թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հայ հասարակության
փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և
արդիականություն)» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն

(ծրագրի անվանումը)

պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով
Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական
բյուջեով նախատեսված 58 873 400 (Հիսուն ութ միլիոն ութ հարյուր յոթանասուն երեք հազար
չորս հարյուր)

(թվերով և բառերով)

ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել
Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային
պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են
Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված
պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող
Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 ջնդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով արդյունքների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վնասել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված լուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 58 873 400 (հիսուն ութ միլիոն ութ հարյուր յոթանասուն երեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար:

(Թվերով և բառերով)

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ -ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից

...ընդունելու իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով
...կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ
ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական
ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի
մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված,
ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Հ/հ 900011024115 ՖՆ Գարծառնական
վարչություն.

Նախագահ՝ Ռադիկ Մարտիրոսյան



Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտ ՊՈԱԿ

ք. Երևան, Արամի 44

Հ/հ 900018005497 Երևանի թիվ 1
Տեղական Գանձապետական բաժ.

ՀՎՀՀ 02508174



Տնօրեն՝ Լիլիթ Ղազանչյան

(ստորագրություն)

(Լիլիթ Ղազանչյան)
(անուն ազգանուն)

Հավելված 1
« 23 » 01 2020թ.
N 25-2/4 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն (ռեկտոր) Լիլիթ Ղազանչյանը վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «___» _____ 2020 թ. N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 58 873 400 (հիսուն ութ միլիոն ութ հարյուր յոթանասուն երեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:


Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտ

Նախագահ՝ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տնօրեն՝ Լիլիթ Ղազանչյան



Հավելված 2
« 23 » 2020 թ.
N 7-24 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական
հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն) ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի
պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

ՀՀ 2020թ. պետբյուջեից բազային ֆինանսավորման համար առաջադրված գիտական
ծրագրի հիմնական նպատակն է՝ բազմակողմանիորեն և համապարփակ ուսումնասիրության և
գիտագործնական խորը վերլուծության ենթարակել գլոբալացման դարաշրջանում հայ
հասարակության պատմական ու արդի զարգացման գործընթացների սոցիալ-քաղաքական,
իրավական, փիլիսոփայական հիմնախնդիրները, ինչպես նաև ՀՀ-ում իրավաքաղաքական
զարգացումների պայմաններում տիրող սոցիալ-իրավական, քաղաքական գործընթացների
ներկա իրավիճակի և հետագա հնարավոր զարգացումների վերլուծությունը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական
հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» բազային ֆինանսավորմամբ ծրագրի
նպատակներն ու խնդիրներն իրականացվելու են Ինստիտուտի գիտության
համապատասխան ուղղություններով բարձրակարգ մասնագների, այդ թվում՝ երկու
ակադեմիկոսի, մեկ թղթակից անդամի, 17 գիտության դոկտորների, 14 թեկնածուների,
ինչպես նաև բազմաթիվ ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների շնորհիվ: Հարկ
է նշել, որ Ինստիտուտի գիտական անձնակազմն օժտված է բազմամյա լուրջ գիտական
փորձով և ձեռքերումներով, ընդգրկված է մի շարք ներպետական և միջազգային ծրագրերում:
Հատկանանակ է, որ ծրագրի լիարժեք իրականացմանը նպաստում են Ինստիտուտի սերտ
համագործակցությունն ինչպես ներպետական մի շարք կառույցների (այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ
Գիտակրթական միջազգային կենտրոն, ԵՊՀ, Երևանի Վ.Բրյուսովի անվան
լեզվահասարակագիտական համալսարան, Խ.Արովյանի անվան մանկավարժական
համալսարան, Երևանի Հայբուսակ Համալսարան, Եվրասիա միջազգային համալսարան,
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, ՀՀ Սահմանադրական դատարան, ՀՀ
Դատախազություն, ՀՀ Քննչական կոմիտե, ՀՀ Փաստաբանական պալատ), այնպես էլ
միջազգային և ԵԱՏՄ պետությունների (Ռուսաստան Բելառուս, Ղազախստան, Լեհաստան,

Հայաստանի, Ռուսիայի, Հունգարիայ, ԱՄՆ և այլն) ինստիտուտների և գիտահետազոտական հաստատությունների հետ, որոնց հետ կնքվել են մի շարք համաձայնագրեր: Հետազոտությունների իրականացմանը նպաստում են նաև անհրաժեշտ Ինստիտուտի նյութատեխնիկական բազան՝ համակարգչային սարքավորումները, գիտական գրադարանն էլեկտրոնային գրադարանն աղբյուրների հասանելիությամբ, և այլն: Հարկ է նշել, որ նախորդ տարիներին Ինստիտուտին հաջողվել է արտաբյուջետային և գրանտային միջոցներ ներգրավել մի շարք կիրառական սոցիոլոգիական, իրավական և քաղաքագիտական ուսումնասիրություններ իրականացնելու համար:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում հետազոտություններն իրականացվում են են չորս գիտական ուղղություններով՝ փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք և քաղաքագիտություն:

Տեսական փիլիսոփայության բնագավառում 2020թ.-ին նախատեսվում է շարունակել ուսումնասիրություններ՝ նվիրված արդի տեսական փիլիսոփայության և մեթոդաբանության հայեցակարգերում հումանիտար գիտությունների մեթոդաբանական և գիտափիլիսոփայական հիմնախնդիրների վերլուծությանը: Արվեստի տեսության և գեղագիտության շրջանակներում իրականացվելու են «հետմոդեռնիզմի ավարտի» հայեցակարգի տարբեր ըմբռնումների և դրանց հետ կապված նոր սկզբունքների և միտումների բացահայտման ուղղված աշխատանքներ: Լեզվի փիլիսոփայության շրջանակներում շարունակվելու են տեսական հետազոտություններ ուղղված քաղաքական և հանրային գործընթացների դիտարկմանը որպես հաղորդակցում: Գիտական ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները ամփոփվելու են մեկ մենագրության և գիտական հոդվածների շարքում:

2020թ.-ին հայ փիլիսոփայության պատմության բնագավառում, նոր մշակված մեթոդաբանական հայեցակարգի հիման վրա, իրականացվելու են վերլուծական գիտահետազոտական աշխատանքներ վաղ և ուշ հայ միջնադարյան, XIX դարի արևմտահայ փիլիսոփայության /այդ թվում՝ քաղաքական փիլիսոփայության/ պատմության հիմնախնդիրների շուրջ: Նախատեսվում է ավարտին հասցնել մի շարք աշխատանքներ ազգային փիլիսոփայա-քաղաքական մտքի պատմության առանցքային խնդիրների՝ հայոց քաղաքակրթական ինքնության, ազգային-սահմանադրական մշակույթի պատմաիրավական և գաղափարախոսական հիմքերի, Հայ եկեղեցու պատմաքաղաքական դերի, ազգային քաղաքականության հիմնասկզբունքների և այլ լուսաբանման ուղղությամբ: 2020 իրականացվելու են գիտահետազոտական աշխատանք նվիրված XIV դ. կաթոլիկ քարոզիչների գրական ժառանգության, XIX - XX դարի արևմտահայ մտածողների պատմափիլիսոփայական ու քաղաքական, աշխարհաքաղաքական հայեցակարգերի ժամանակակից փիլիսոփայական մեկնաբանմանը, որի արդյունքները ամփոփվելու են մենագրությունում և գիտական հոդվածներում:

Սոցիալական փիլիսոփայության բնագավառում շարունակվելու են հետազոտություններ նվիրված ՀՀ-ում տիրող մի շարք սոցիալ-փիլիսոփայական հիմնախնդիրների բացահայտմանը, որոնցից են օրինակ՝ մշակութային կյանքի ճգնաժամային երևույթները, օտարման հաղթահարման ուղիների լուսաբանումը: 2020թ.-ին նախատեսվում է ավարտել պետաիրավական հետազոտությունների բաժնի հետ իրականացված համապարփակ գիտագործնական ուսումնասիրություններն ու վերլուծությունները նվիրված ՀՀ-ում պառլամենտական կառավարման համակարգի, «պառլամենտարիզմ», «ժողովրդավարություն» և «լեզվափոխություն» հասկացությունների փոխներգործության սոցիալ-փիլիսոփայական, գործառնական ասպեկտներն ու դրսևորման առանձնահատկությունները: Ավելին, պետաիրավական հետազոտությունների բաժնի հետ համատեղ, նախատեսվում է իրականացնել միջգիտակարգային ուսումնասիրություն նվիրված գլոբալացման ժամանակաշրջանի հիմնախնդիրներին մեկին՝ բիոէթիկային: Իրականացված հետազոտությունների արդյունքները ներակավելու են մենագրության և գիտական հոդվածների տեսքով:

Սոցիոլոգիայի բնագավառում 2020թ. իրականացվելու են ուսումնասիրություններ նվիրված ժողովրդական բողոքի ալիքի վրա ձևավորված քաղաքացիական շարժմանը, ոչ բնական հեղափոխության ու երիտասարդ սերնդի աննախադեպ ակտիվությանը ՀՀ-ում ընթացող սոցիալ-քաղաքական, տնտեսական գործընթացներին: Ավելին, իրականացվելու են ուսումնասիրություններ նվիրված սոցիալական ցանցերի ազդեցությանը հայ երիտասարդության («թվային սերնդի»), արժեհամակարգի ձևավորման և քաղաքական կենտրոնացմանը վրա: Բաժնի աշխատակիցները «Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի» հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն, նախատեսում են բազային ֆինանսավորմամբ բյուջետային միջոցներից դուրս իրականացնել երեք համապետական ներկայացուցչական ուսումնասիրություններ նվիրված ՀՀ-ում քաղաքականորեն նշանակալի գործընթացների ու հիմնախնդիրների վերլուծությանը հանրահայտ Gallup/BalticSurveys կազմակերպության հետ, որի նպատակ է՝ խորքային ուսումնասիրության ենթարկել ՀՀ-ում տիրող սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործընթացները և մեր չափահաս բնակչության՝ վերաբերմունքը դրանց նկատմամբ: Արդյունքները ներկայացվելու են երկրի իշխանություններին, գիտական ու վերլուծական կենտրոններին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններին: Շարունակվելու են նաև երկրում ընթացող միգրացիոն գործընթացների սոցիալ-տնտեսական ազդեցության վերլուծությունները՝ նպատակաուղղված լինելով հատկապես ուսումնասիրել մոտակա ապագայում հնարավոր հայրենադարձության իրական պոտենցիալն ու միջոցը: Գիտական ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները կամփոփվեն գիտական հոդվածների շարքում, գիտաժողովներում և զեկույցներում:

Քաղաքագիտական ուսումնասիրությունների բնագավառում իրականացվելու հետազոտություններ նվիրված թավշյա հեղափոխության և պառլամենտարիզմի հաստատման արդյունքում օրհասական դարձած ՀՀ քաղաքական համակարգի հիմնախնդիրներին: Դա նշանակում է՝ 1) համեմատական քաղաքագիտության շրջանակներում լավագույնս ուսում-


...համանման՝ պառլամենտական պետությունների քաղաքական համակարգերը, 2) ...սահմանափակել հայոց պետականության պատմական շրջանակներից հայտնի քաղաքական համակարգերի փորձը 3) և, անշուշտ, նման խնդիրները լուծել հայոց քաղաքակրթական-մշակութային ինքնատիպության շրջանակներում: Ակնհայտ է, որ արդիական, դինամիկ և հեռանկարի մեջ զարգացող պետականություն, քաղաքական համակարգ, վարչակարգ և այլ հիմնահարցեր իրենց իրական լուծումը կարող են ստանալ ժամանակակից աշխարհի երկրաքաղաքական զարգացումների համատեքստում: Վերոնշյալ հետազոտության շրջանակներում ՀՀ-ում առաջին անգամ ուսումնասիրության է ենթարկվելու մեր երկրի քաղաքական զարգացման ազդեցությունն արտաքին միջավայրի՝ տարածաշրջանի վրա: Շարունակվելու են աշխատանքներ նվիրված նաև քաղաքական մշակույթի, ժողովրդավարության, իրավական պետության ու քաղաքացիական հասարակության, ինչպես նաև էլեկտորալ քաղաքագիտության հիմնախնդիրների խորքային ուսումնասիրությունը:

Պետաիրավական հետազոտությունների բնագավառում նախատեսվում է 2020թ. շարունակել ուսումնասիրությունները նվիրված իրավունքի տեսության և պատմության, քրեական իրավունքի, մարդու իրավունքների և հայ իրավունքի աղբյուրների և իրավական մտքի զարգացման հիմնախնդիրներին: Ակնհայտ է, որ ՀՀ-ում ընթացող սահմանադրաիրավական և դատաիրավական բարեփոխումները, կառավարման խորհրդարանական ձևի հաստատումը, օրենսդրական համակարգի կատարելագործման ուղղված հիմնախնդիրների բացահայտումը հանդիսանում է իրավագիտության ուսումնասիրության կարևորագույն օբյեկտ և շարունակում է մնալ ինստիտուտի իրավաբանների ուշադրության կիզակետում: Այդ պատճառով, բաժնի իրավաբանները 2020թ.-ին նախատեսում են իրականացնել նոր ուսումնասիրություններ նվիրված սահմանադրական իրավունքի առանցքային հիմնախնդիրների բացահայտմանը որոնցից են՝ պետության պառլամենտական կառավարման ձևի դրական և բացասական կողմերը, ժողովրդաիշխանության իրացման ձևերը, ՀՀ-ի համար արդիական հանդիսացող պետության հայեցողության սահմանների հստակեցման, դատական իշխանության և սահմանադրական արդարադատության իրացման առանձնահատկությունները և այլն: 2020թ.-ին բաժնի աշխատակիցները նախատեսում են Ինստիտուտի սոցիոլոգիայի բաժնի հետ համատեղ իրականացնել միջգիտակարգային հետազոտություն՝ օրենսդրության և իրավական համակարգի մշտադիտարկում և գնահատում, որոնց արդյունքների հիման վրա հնարավորություն կընձեռվի բացահայտել ՀՀ օրինաստեղծ և իրավաստեղծ գործունեության համակարգում առկա բացերն ու հակասությունները: Ավելին, վերջիններիս հիման վրա կարելի է ներկայացնել գիտականորեն հիմնավորված առաջարկություններ ուղղված օրինագծերի, ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակման օրենսդրական տեխնիկայի կատարելագործմանն ու իրավակարգավորումների արդյունավետության բարձրացմանը: 2020թ.-ին շարունակվելու են աշխատանքները նվիրված արդի ժամանակաշրջանում գործնական նշանակություն ունեցող ուղղություններից մեկին՝ անձի իրավական դրության առանձնահատկություններին, իրավունքների և պարտականությունների սահմանա-

...ական երաշխիքների ամրագրման բազմակողմանի ուսումնասիրությանը, ինչպես
...վետություն-անհատ փոխհարաբերության տեսական և գործնական հիմնախնդիրների
բացահայտմանը: Գիտական ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները
կամփոփվեն մենագրությունում և գիտական հոդվածների շարքում:

2020թ.-ին «Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և
իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» բազային
ֆինանսավորմամբ ծրագրի իրականացմամբ ստացված արդյունքները ներկայավելու են
մենագրությունների, ժողովածուների, ուսումնական ձեռնարկների, գիտական հոդվածների
տեսքով: Ավելին, իրականացվելու է գիտաուսումնական գործունեություն ասպիրանտների և
դոկտորանտների պատրաստման ուղղությամբ: Նախատեսվում է իրականացնել
հանրապետական գիտաժողովի, կլոր սեղան- քննարկումների կազմակերպում, մասնակցել
միջազգային և ներպետական գիտական ծրագրերին ու միջոցառումներին, ներկայացնել
գիտամատչելի հրապարակումներ թերթերում, ամսագրերում և հեռուստատեսությամբ:

Կազմակերպության
տնօրեն՝



(Լիլիթ Ղազանյան_)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

(Լիլիթ Ղազանյան)
(անուն ազգանուն)

23 Հավելված 3
21 2020 թ.
N 7-24 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման					պահանջվող գումարը (հազար դրամ)
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	
	Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրները (պատմություն և արդիականություն)	Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության, իրավական պետության, արդի սոցիալական և քաղաքական ինստիտուտների կայացման և զարգացման գործընթացների փիլիսոփայական, սոցիալ-իրավական, քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրների հետազոտությունն ու վերլուծությունը, ինչպես նաև հայ ժողովրդի պատմա-մշակութային ավանդույթների, հոգևոր ժառանգության պահպանման ու զարգացման ուսումնասիրությունը:	- Գիտատեսական վերլուծություններ: - Կիրառական ուսումնասիրություններ: - Գիտաժողովների, կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում: Գիտաուսումնական գործունեություն, երիտասարդ գիտական կադրերի պատրաստում: - Պետաիրավական փաստաթղթերի, օրենքների, օրինագծերի և պաշտոնական որոշումների ու դրանց նախագծերի գիտական փորձաքննություն ու խորհրդատվություն:	Գիտական մենագրությունների, ժողովածուների ուսումնական ձեռնարկների, հոդվածների, տպագրություն: Հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում, մասնակցություն, միջազգային գիտական միջոցառումներին և ծրագրերին, գիտաուսումնական, գիտամանկավարժական, գործունեության իրականացում, այդ թվում՝ ասպիրանտների և դոկտորանտների պատրաստում, գիտամատչելի հրապարակումներ թերթերում, ամսագրերում և հեռուստատեսությամբ	01.01.2020թ. – 31.12.2020թ.	58 873,4
Ընդամենը						

Կազմակերպության
սնօրեն

(ստորագրություն)

(Լիլիթ Ղազանյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

(Լիլիթ Ղազանյան)
(անուն ազգանուն)

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	1700
	էլեկտրաէներգիայի ծառայություն	600
	ջրի ծառայություն	550
	ջրամատակարարման ծառայություն	50
	կապի ծառայություն	500
	Աղբահանություն	0
2	Գույք	400
3	Սարքեր և սարքավորումներ	355.4
4	Նյութեր	500
5	Գործուղումներ	500
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	400
7	Արշավախմբեր	0
8	Հրատարակման ծախսեր	1200
9	Վառելիք մեքենայի	1000
Ընդամենը		6055.4

Կազմակերպության
տնօրեն՝



(Լիլիթ Ղազանյան)
(տնօրենություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝

(Նարինե Մուրադյան)
(տնօրենություն) (անուն ազգանուն)


Կ.Տ.

Հավելված 4.1
2020 թ.
N 23-24 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	1700
	էլեկտրաէներգիայի ծառայություն	600
	ջրի ծառայություն	550
	ջրամատակարարման ծառայություն	50
	կապի ծառայություն	500
	Աղբահանություն	0
2	Գույք	400
3	Սարքեր և սարքավորումներ	355.4
4	Նյութեր	500
5	Գործուղումներ	500
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	400
7	Արշավախմբեր	0
8	Հրատարակման ծախսեր	1200
9	Վառելիք մեքենայի	1000
Ընդամենը		6055.4

Կազմակերպության
տնօրեն՝



(Լիլիթ Նազանյան)
(անուն ազգանուն)

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝

(Նարինե Մուրադյան)
(անուն ազգանուն)

Կ.Տ.

* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում